ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2
ԵՄ-ԳՀԱՊՁԲ-20/55 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

04.08.2020թ.

ք. Երևան

04.08.2020թ. ժամը 10:00 ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում տեղի ունեցավ շինարարական և տնտեսական ապրանքների ձեռքբերման ԵՄ-ԳՀԱՊՁԲ-20/55 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Ռ. Ներսիսյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Երթևեկություն» մասնաճյուղի պետի ժ/պ, |
| Ա. Գալստյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Երթևեկություն» մասնաճյուղի գլխավոր ինժեներ, |
| Վ. Պողոսյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Երթևեկություն» մասնաճյուղի պետի տեղակալ, |
| Ս. Քոչարյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Երթևեկություն» մասնաճյուղի գործավար-օպերատոր, |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ռ. Ներսիսյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Մ. Ղազարյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը: Հանձնաժողովի անդամ Հ. Կճայանը («Երթևեկություն» մասնաճյուղի Կոմերցիոն բաժնի տեսուչ) բացակայում էր:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի թվով 4 անդամ, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## 1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:
3. Ընթացակարգին ներկայացված հայտերը գնահատելու մասին:

4. Բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության մասին:

5. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:

6. Ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարելու մասին:

7. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:

8. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

9. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 2. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2020թ.-ի օգոստոսի 4-ին, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի ժամը 10:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և հայտարարեց գնման հայտով սահմանված ընդհանուր գները:

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Գործիքների հավաքածու պլաստմասե արկղով 110-115 կտոր | 35000 |
| 2 | Աստիճան բացվող 2.21մ | 22000 |
| 3 | Ռետինե խողովակ 3/4 | 40000 |

Ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայտ կազմել և ներկայացրել են ներքոնշյալ մասնակիցները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Մասնակցի վերաբերյալ տվյալներ |
|---|---|---|
| 1 | «Գլոբալ-Շին» ՍՊԸ | ՀՎՀՀ՝ 04234503, գործունեության հասցե՝ ՀՀ, Արարատի մարզ Գ. Շահումյան Ա. Մինասյան 28, Հեռ.՝ +(374)94242426, էլ. հասցե՝ global-shin@inbox.ru |
| 2 | «ԴՄ ՄԱՐԿԵՏ» ՍՊԸ | ՀՎՀՀ՝ 01018364, գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վիլնյուսի փ. 37/9, Հեռ.՝ +37477767172, էլ. հասցե՝ dm.market@inbox.ru; info@eltender.am |
| 3 | «Էկոմիքս» ՍՊԸ | ՀՎՀՀ՝ 01255701, գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ա. Բաբաջանյանի 60/2, Հեռ.՝ 098360326, էլ. հասցե՝ |

| | | |
|---|---|---|
| | | tenders@360shinbaza.am |
| 4 | «Մեծ Ծիածան» ՍՊԸ | ՀՎՀՀ՝ 00103837, գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վ. Համբարձումյան 91, Հեռ.՝ +37410323324, էլ. հասցե՝ ciacanmarket@gmail.com |

Հանձնաժողովը գնահատեց հայտ կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված և ներկայացված են Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ սահմանված պահանջներին համապատասխան:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 4. ԲԱՑՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՀԱՅՏՈՒՄ ՊԱՀԱՆՋՎՈՂ (ՆԱԽԱՏԵՍՎԱԾ) ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը գնահատեց բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ պահանջված փաստաթղթերը առկա են և կազմված են սահմանված պահանջներին համապատասխան:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ԱՅԼ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը:

ՀՀ դրամ

| Չափաբաժնի | | Մասնակցի անվանում | Գնման հայտով սահմանված գինը | Մասնակիցների առաջարկած գները | | |
|---|---|---|---|---|---|---|
| N | Անվանում | | | արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | Գործիքների հավաքածու պլաստմասե արկղով 110-115 կտոր | «Գլոբալ-Շին» ՍՊԸ | 35000 | 100000 | 0 | 100000 |
| | | «ԴՄ ՄԱՐԿԵՏ» ՍՊԸ | 35000 | 94065 | 18813 | 112878 |
| | | «Էկոմիքս» ՍՊԸ | 35000 | 29163.33 | 5832.67 | 34996 |
| | | «Մեծ Ծիածան» ՍՊԸ | 35000 | 75000 | 15000 | 90000 |
| 2 | Աստիճան բացվող 2.21մ | «Գլոբալ-Շին» ՍՊԸ | 22000 | 30000 | 0 | 30000 |
| | | «Էկոմիքս» ՍՊԸ | 22000 | 18330 | 3666 | 21996 |
| | | «Մեծ Ծիածան» | 22000 | 49916.67 | 9983.33 | 59900 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | ՍՊԸ | | | | |
| 3 | Ռետինե խողովակ 3/4 | «Գլոբալ-Շին» ՍՊԸ | 40000 | 40000 | 0 | 40000 |
| | | «Մեծ Ծիածան» ՍՊԸ | 40000 | 126666.67 | 25333.33 | 152000 |

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը,

2. Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը չստուգել՝ պատճառաբանված որոշման բացակայության պատճառով:

3. Գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

4. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1, 2, 3 | «Գլոբալ-Շին» ՍՊԸ | բավարար |
| 1 | «ԴՄ ՄԱՐԿԵՏ» ՍՊԸ | բավարար |
| 1, 2 | «Էկոմիքս» ՍՊԸ | բավարար |
| 1, 2, 3 | «Մեծ Ծիածան» ՍՊԸ | բավարար |

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշել և հայտարարել ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցներին.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի N | Մասնակցի | | Ընտրված մասնակցի դեպքում նշվում է "X" | Մասնակցի առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ |
|---|---|---|---|---|
| | Զբաղեցրած տեղ | Անվանում | | |
| 1 | 4 | «Գլոբալ-Շին» ՍՊԸ | | 100,000.00 |
| | 3 | «ԴՄ ՄԱՐԿԵՏ» ՍՊԸ | | 94,065.00 |
| | 1 | «Էկոմիքս» ՍՊԸ | X | 29,163.33 |
| | 2 | «Մեծ Ծիածան» ՍՊԸ | | 75,000.00 |
| 2 | 2 | «Գլոբալ-Շին» ՍՊԸ | | 30,000.00 |
| | 1 | «Էկոմիքս» ՍՊԸ | X | 18,330.00 |
| | 3 | «Մեծ Ծիածան» ՍՊԸ | | 49,916.67 |
| 3 | 1 | «Գլոբալ-Շին» ՍՊԸ | X | 40,000.00 |
| | 2 | «Մեծ Ծիածան» ՍՊԸ | | 126,666.67 |

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 6. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հանձնաժողովը որոշեց Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով որպես ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցնող մասնակից հայտարարել սույն արձանագրության 5-րդ կետով ներկայացված աղյուսակում նշված՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցներին:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 7. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Մ. Ղազարյանը Հանձնաժողովին ներկայացրեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը: Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 8. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ և ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:

3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց պայմանագրերի նախագծերը: Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել պայմանագրերի նախագծերը,

2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը ընտրված ճանաչված մասնակիցներին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկները և պայմանագրերի

նախագծերը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ նշված ժամկետում վերջիններիս կողմից պայմանագրերը չստորագրելու և պայմանագրերի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիրը ստորագրելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

| | | |
|---|---|---|
| **Հանձնաժողովի՝** | | |
| **Նախագահ** | | Ռ. Ներսիսյան |
| **Անդամներ** | | Ա. Գալստյան |
| | | Վ. Պողոսյան |
| | | Ս. Քոչարյան |
| **Քարտուղար** | | Մ. Ղազարյան |